

## ԿԱՐԳ

# «ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅՅՈՐԴՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

## I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգը մշակված է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2006թ. սեպտեմբերի 15-ի թիվ 740-Ն հրամանի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. ապրիլի 28-ի թիվ 700-Ն որոշման հիման վրա:
2. Սույն կարգով սահմանվում է «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) հայցորդության ընդունելության պայմաններն ու կարգը:

## II. Հայցորդություն

3. Համալսարանի թեկնածուի գիտական աստիճանի հայցորդ է համարվում բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող անձը, ով կցվում է ասպիրանտուրային՝ ուսանելով ասպիրանտուրայում և ինքնուրույն աշխատանքով գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն նախապատրաստելու համար:
4. Հայցորդությունը իրականացվում է վճարովի հիմունքներով՝ Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ հաստատված վարձավճարի սահմաններում:
5. Հայցորդը հրամանագրվում է նախատեսվող գիտական ղեկավարի հետ հարցազրույցի արդյունքների և համապատասխան ամբիոնի եզրակացության հիման վրա՝ համապատասխան ԲՈՀ-ի կողմից հաստատված կարգի,
6. Դիմորդները հետբուհական մասնագիտական կրթության դեպարտամենտ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.
  - ա) Դիմում ռեկտորի անունով,
  - բ) Բարձրագույն կրթության դիպլոմի և գնահատականներով միջուկի պատճենները,

գ) Կադրերի հաշվառման անձնական թերթիկ, ինքնակենսագրություն և 3 լուսանկար (3x4 չափսի),

դ) Հրատարակված գիտական աշխատությունների հաստատված ցուցակը և տպագրված հիմնական հոդվածների պատճենները կամ ընտրած մասնագիտությունից ընդարձակ գիտական ռեֆերատ,

ե) Ատենախոսության թեմայի հիմնավորումը և ատենախոսության կառուցվածքը՝ ենթադրյալ գիտական ղեկավարի համաձայնությամբ և թեմայի վերաբերյալ պրոֆիլավորող ամբիոնի կարծիքով,

զ) Քաղվածք աշխատանքային գրքույկից (կամ աշխատանքային գրքույկի պատճենը),

է) Բնութագիր-երաշխավորագիր աշխատանքի վայրից:

7. Համալսարանի դոկտորի գիտական աստիճանի հայցորդ է համարվում գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձը, ով կցվում է դոկտորանտուրային՝ գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն նախապատրաստելու համար: